



# ԱՒԵՏԱԼՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆՔ, 10 ՓԵՏՐՈՒԱՐ, 1929

ԹԻՒ 3

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

### ԿՐՕՆՔԻՆ ՀԻՄՆ

2. Բանականության վրայ հիմնուած կրօնը:

Հեղինակութեան վրայ հաստատուած կրօնքը պարզ և անպայմանադրական հաւատքով մը պէտք է ընդունուի գայն խողներու կողմէ, և այդ կերպով ալ ծընողներէն զաւակներուն կ'աւանդուի:

Ժամանակ մը վերջը սակայն այնպիսի կրօնք մը անպայման կարգ մը հարցերուն պիտի բաղխի, որոնք միտքէն, խիղճէն կամ փորձառութիւնէն ծագում կ'առնեն: Ճիշդ է ինչ որ կրօնքի անունով կ'ըսուի: Շիտա՞կ է կրօնքի կողմանէ հաստատուած վարքը: Փորձառութիւնը կը համաձայնի՞ մեր կրօնքին այսինչ յայտարարութեան հետ:

Հեղինակութեան վրայ հաստատուած կրօնքի մը առաջին հակազդեցութիւնն է բանականութեան վրայ հիմնուած կրօնք մը: Խորհող մարդն է որ կ'սկսի հարցնել: Այն կ'ըսէ թէ պիտի ընդունի ինչ որ իրեն բանական կ'երեւայ. ան պիտի հիմնէ իր կրօնքը բանականութեան վրայ: Այս իրեն բնական և չիտակ կ'երեւայ:

Քրիստոնեայ եկեղեցիին պատմութեան մէջ մեծ չրջաններ եղած են, երբ կրօնքին համար այս բանական հիմը

չատերուն կողմանէ ընդունուած է: Իսլամ կրօնքը իր ընդունելութեան համար իր պարզ եւ բանական ըլլալը իբր մեծ փաստ մը գործածած է: Բայց կրօնքը բանականութեան վրայ հիմնել պիտի ունենայ իր հետեւեալ վտանգները:

1. Կրօնքը բանականութեան վրայ հիմնել կը նշանակէ գայն բաղկացնել շարք մը զաղափարներէ, հաւատալիքներէ և վարդապետութիւններէ, այնպէս որ վերջապէս փիլիսոփայութիւնը պիտի գրաւէ կրօնքին տեղը: Անոր համար կրօնքին պարունակութիւնը պիտի կազմեն ինչ որ մարդ կը խորհի Աստուծոյ, աշխարհի և մարդու վրայ: ԺԲ. զարուն մէջ կրօնքը այսպէս էր: Եւ բանականութեան վրայ հաստատուած կրօնք մը ինքզինքը կ'ենթարկէ բանականութեան վրայ հաստատուած անհաւատութեան բոլոր յարձակումներուն:

2. Երբ կրօնքը բանականութեան վրայ հաստատուի կրթուած միտքն է որ կրնայ հետեւիլ անոր խորհուրդներուն և հասկնալ գայն: Ճշմարիտ կրօնքը կը միտի ուսեալ զստակարգի մը սեփականութիւնը դառնալ: Տգէտները չեն կրնար գայն ըմբռնել և հետեւաբար չեն կրնար գայն իւրացնել. առ առուելն անոնք պէտք է զօհանան ստո-

րին կարգէ կրօնքով մը, առանց զիտու-  
տութեան հաւատքի կրօնքով մը: Գի-  
տականները (կիօսիֆ) այսպէս ստրկե-  
ցուցին եկեղեցիի սկզբնական շրջաննե-  
րուն մէջ:

3. Փիլիսոփայութեան մեթոտները  
և սկզբունքները զարէ գար կը փոխուին:  
Այսօր ընդունելի չեն այն փիլիսոփա-  
յական գաղափարները, որոնք ասիէ  
հազար հինգ հարիւր, եօթը հարիւր,  
երկու հարիւր, նոյնիսկ եօթամասուն  
կամ աւելի պահաս տարիներ առաջ  
կ'ընդունուէին: Կրօնք մը որ ինքզինքը  
օրուան փիլիսոփայութեան հետ կը  
նոյնացնէ, և կրօնք մը որ բանականու-  
թեան վրայ հաստատուած է՝ մէկ ելք  
միայն կրնայ տւնենալ, — ինքզինքը կսր-  
ծանումի կը դառապարտէ երբ նոր փի-  
լիսոփայութիւն մը երևան գայ:

4. Բանականութիւնը ինքնիրմէն  
վեր չի կրնար բարձրանալ: Իր մեծա-  
գոյն մեթոտը պատճառի և արդիւնքի  
օրէնքն է թիւիւս: Բայց անոր գործա-  
ծութիւնովը ինքնիրմէ անդին չի կրնալ  
անցնիլ: Ան գաղափարներ կ'արտադ-  
րէ, և գաղափարներէն անդին երբէք  
չի կրնար երթալ: Անոր վերջին խօս-  
քը Աստուծոյ մասին գաղափար մ'է,  
և ոչ թէ Աստուծոյ իրականութիւնը:  
Բանականութեամբ կառուցուած ոեւէ  
մէկ շէնք չի կրնար Աստուծոյ կեանքը  
յառաջ բերիլ մարդուն հոգիին մէջ:  
Բանականութիւնը կրնայ կրօնքը քննու-  
թեան առարկայ ընել, բայց չի կրնար  
արտադրել զայն:

5. Բանականութիւնը գործիք մ'է  
միայն ըմբռնելու, գառաւորելու, բա-  
ցատրելու և վերստին կարգադրելու  
համար այն նիւթերը չորոնք կը հայ-  
թայթէ փորձառութիւնը: Անիկա հիմ  
մը չէ, այլ գործունէութիւն մը որ ու-  
րիշ հիմ մը կը պահանջէ: Անիկա կըր-  
նայ պրպտիւ... ուրիշ բան մը. անիկա  
կրնայ ճշմարտութիւնը փառտիւ... ու-

րիշ բանի մը. անիկա կրնայ մեզ առաջ-  
նորդել... ուրիշ բանի մը: Ինքնին  
անգոր և անարդիւն է ան... միայն թէ  
ինքը ուրիշ հիմ մ'ունի: Երկար դարեր  
չատեր այնպէս կարծած են որ խորհե-  
լու կարողութիւնը մարդուն բարձրա-  
գոյն ընդունակութիւնն է: Հիմա կը  
հասկնանք որ այս այսպէս չէ: Մար-  
դուն կամքը կրնայ վարել իր մտածու-  
մը, և հետեւաբար անկէ բարձր է: Բա-  
նականութիւնը զոյ է կամքին հնազան-  
դելու համար, սահմանելով անոր ջան-  
քին առարկաները: Բանականութիւ-  
նը տէր չէ, ա'լ ծառայ: Բանականու-  
թիւնը կրօնքի իբր հիմ ընդունիլ կը  
նշանակէ երկրորդական հիմ մը ընտրել  
և ոչ թէ վերջնական, կը նշանակէ կը-  
րօնքը մտկերեսային ընել և ոչ թէ բա-  
ցարձակօրէն իրական: Երբ բանակա-  
նութիւնը կ'ըսէ որ կրօնքը ճշմարիտ է,  
տակաւին սա հարցը կը մնայ թէ ինչո՞ւ  
ճշմարիտ է ան: Այս հարցումը մեզ  
կ'առաջնորդէ բանականութիւնէն անդին  
ուրիշ հիմի մը:

Ճ. Է. ՄԷՐԸԼ

ՀԱՅ ԱՌԱՔ. ՆԻ ՀԱՅ ՍԻՆՏ.

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Ձեռք ուղեր ներկայիս քրթիւ անց-  
եալը, գտնելու համար այն պատճառնե-  
րը, որոնց իբր արդիւնքը յառաջ եկաւ  
Հայ Աւետ. եկեղեցին: Գուցէ օր մը  
աննախապաշար և անկողմնակալ պատ-  
մագիր մը մեզի կը ներկայացնէ ծագու-  
մը և ընթացքը աւետարանական շար-  
ժումին, որ մեծ ազդակներէն մէկը ե-  
ղած է ԺԹ. զարու հայ կեանքը կերտե-  
լու մէջ: Միայն պէտք է հոս նկատի  
առնել սա իրականութիւնը թէ այս օր  
կայ մօտաւորապէս 35000 հոգիներէ  
բաղկացած Հայ Աւետ. եկեղեցի մը զոր  
կը կազմեն գանաւան երկիրներու մէջ  
գտնուող Հայ Աւետ. եկեղեցիներու եօ-  
թը Միութիւնները, անջատ եկեղեցի-

ները և տակաւին անկազմակերպ համայնքները: Հարցը այս է՝ թէ ի՞նչ պէտք է ըլլան այս երկու եկեղեցիներու փոխ յարաբերութիւնները իրարու հետ:

Հայ Աւետ. եկեղեցին նկատել իբր հերձուածող մը Մայր Եկեղեցիէն, իբր հերետիկոս մը կամ մոլորեալ մը ուղղափառ դասանանքէն, զայն ներկայացնել իբր ապազգայնացած շահաւէր տարր մը վնասակար ազդութեան, գրչի հարուածով մը զայն դուրս հոչակել Մի և Ընդհանրական Սուրբ Եկեղեցիէն, փոխանակ հարցը լուծելու ա'լ աւելի կնճռոտ կը դարցնեն զայն: Բայց ցաւալի է որ հայ մամուլը իր կրօնական և քաղաքական օրկաններով այսպէս արտայայտուեցաւ այս հարցին հանդէպ, ցուցնելով թէ տակաւին որչափ հետի ենք զիրար հասկնալէ և արժէքները ճիշդ գնահատելէ:

Ներկայիս Հայ Աւետարանական ինքզինքը բաժնուած չի զգար այն արբաղան ժառանգէն, Հայ Եկեղեցւոյ անցեալէն, զոր կիրառած են հայ մարտիրոսները, քրիստոսանուէր նահատակներն, երկնասլաց հոգիները: Զերմեռանդ Լուսուորիչը, վերանորոգիչ Ներսէսը, տեսլապաշտ Սահակն ու Մեսրոպը, միսկիք Նարեկացին, գեղապաշտ Շնորհալին, զթափրա Հայրիկը կը խօսին մեր սրտերուն իրենց պատգամները ինչպէս ոեւէ հայու մը սրտին: Լուսաւորիչը մեզի նոր հաւատք կը ներշնչէ, Սահակ Պարթևն ու Մաշթոցը նոր տեսիլք կը պարզեն, Նարեկացիով մեր սիրտերուն մէջ նոր աղօթք մը կը մխայ, Շնորհալիով մեր հոգիները Անմահ Լոյսին շուրջը կը ճախրեն, իսկ Հայրիկին սրտէն նոր սէր մը կը ծորի մեր հոգիներուն մէջ: Այո, ասոնք և նմանները այնչափ մերն են որչափ որ են ուրիշ ոեւէ հայու մը:

Ի՞նչ է ներկայիս Հայ Աւետարանականին պատգամը: Մենք չենք հաւատար որ Հայութիւնը կը փրկուի երբ ան բողոքականութիւնը ընդգրկէ, և կամ

երբ ուրիշ ոեւէ մէկ եկեղեցիին պատկանի, այլ կը հաւատանք թէ հայը կը փրկուի երբ ան քրիստոնէական նկարագիր ունենայ, որ կարելի է միայն Քրիստոսով: Թէ ոեւէ քրիստոնէական եկեղեցի մը մէջ փրկուածներ կրնան ըլլալ: Մենք կը հաւատանք թէ այսօր հայութեան զերաւոյն հարցն է նկարագրի ինկամութիւնը, հայ ընտանիքին քայքայումը, թէ ոեւէ հայ եկեղեցի մը գերազոյն պարտականութիւնն է հայուն առ օրեայ կեանքին մակարդակը բարձրացնել, առաջնորդելով զայն զէպ ի կենաց Ազբիւրը: Ահա այս է այն գետինը ուր պէտք է հայ եկեղեցիները իրարու քով գան, գործակցութեամբ վերաշինելու հայ ընտանիքը, համերաշխաբար սրբելու հայ նկարագրին բոլոր տեղեղութիւնները, ազնուացնելով զայն Փրկչին նմանութեամբ: Պէտք չէ ուղղափառի և հերետիկոսի, ազգայնի և ապազգայնի տնճար վէճերը յուզել, մինչ դառնամորմօք ցաւեր ունինք բուժելիք, բարոյական թարախոտ վէրքեր ունինք դարմանելիք, որոնք մահացու ըլլալու հանգամանքը կ'ստանան: Մոռնալով ամէն բան և քանդելով հպարտութեան, նկմտութեան, ինքնահաւանութեան բոլոր պատռարները պէտք է իրարու քով գալ մեր բարոյական ախտերուն դարման մը գտնելու համար:

Ահա այս է ներկայիս Հայ Աւետ. եկեղեցիին պատգամը, զոր կ'ուզէ նորէն ու նորէն աւետել, ուժգին շեփորել հայոց հայութեան: «Որ ունիցի ականջս լուրջ, լուրջէ:»

ՄԵՐ ԴԻՐՔԸ ՈՉ ՔՐԻՍՏՈՆԵԱՎԱՅՆԷԼ  
ԿԵԱՆՔՈՎ ԱՆԴՍՄԵՆՈՒՆ ՀԱՆԴԷՊ

1928 Նոր Աւետարելի թիւ 21, 22, 23 և 26 ին թրքերէն մասին խմբագրականներուն մէջ ջանացիք էինք Հայ Աւետ. եկեղեցիին հոգեւոր վիճակը պարզել: Զանոնք կարգացող քոյր մը,

«եկեղեցիի մէկ բարեկամը» ստորագրութեամբ թուղթով մը մեղի կը ներկայացնէ հետեւեալ հարցումները:

1. Թիւ 26-ի խմբագրականին մէջ կ'ըսէիք թէ այն որ Քրիստոսով նոր արարած մըն է և Անոր հետ տեւական հաղորդակցութեամբ կ'ապրի Աւետարանական եկեղեցիին մէկ անդամն է: Ներկայիս մեր եկեղեցւոյ անդամները այս իմաստով վերտօնին ծնունդի փոքրագոյնը ունին: Ի՞նչ է ձեր անձնական համոզումը այս մասին:

2. Ս. Գրքէն կը սորվինք որ փրկուած թիւներ կ'արտայայտուին ձեռնակաւ պաշտարութեամբ, խոտորվածութեամբ, աղօթքով և վկայութեամբ: Մեր եկեղեցիի անդամներուն կեանքը այս իմաստով Աստուծոյ խօսքին հետ համաձայն է:

3. Երբ եկեղեցիի անդամները քրիստոնէական կեանք չեն յուշներ, շիտա՞կ է որ անոնց հետ Ս. Հաղորդութեան չմասնակցիմ ե մինչև ե՞րբ:

4. Եւ երբ շտապուած ուրիշ եկեղեցիի մը կամ ընկերակցութեան մը մէջ Ս. Հաղորդութեան մասնակցիմ ո՞վ է պատասխանատուն, ե՞րբ թէ եկեղեցին:

Այս չորս հարցումները կրնանք վերածել երկուքի. —

1. Եկեղեցւոյ անդամները քրիստոնէական կեանք կ'ապրին:

2. Եթէ չեն ապրիր ի՞նչ պէտք է ըլլայ մեր դիրքը անոնց հանդէպ:

Ուեէ մէկ եկեղեցիի անդամներուն մէջ ինկածներ, հաւատքը կորսնցուցածներ, Աստուծոյ հետ հաղորդակցելէ զտրուածներ, և նոյնիսկ առանց հոգեւոր կեանք մը ունենալու անդամ եղածներ կրնան գտնուիլ: Անշուշտ օր մը այսպիսիներուն բուն նկարագիրը յայտնի պիտի ըլլայ, բայց մինչև այդ անոնք պիտի շարունակեն եկեղեցւոյ անդամակցիլ: Ուեէ մէկու համար վերջնականապէս կարելի չէ և ներելի չէ մարդուն ներքին կեանքին մասին բացար-

ձակ վճիռներ արձակել: Մենք շատ անգամ միայն շօշափելիօրէն արտայայտուած մեղքերը կը տեսնենք, զինովութիւն, գողութիւն, անբարոյականութիւն, եւ այլն: Եւ կամ շատ յայտնի կերպով քրիստոնէական պարտականութիւններու մէջ կատարուած թերացումները մեր ուշադրութիւնը կը գրաւեն:

Բայց շատ մը մեղքեր անտեսանելի կերպով կրնան շատ անգամ մինչև գերեզման մարդուն մէջ պահուած մնալ: Հետեւաբար ամէնէն շուրջ կարծուած եկեղեցիի մը կամ ընկերակցութեան մը մէջ հաւանական է որ ոչ-քրիստոնէաներ կամ ինկածներ գտնուին: Եւ ի՞նչ է ուեէ մէկ եկեղեցիին մէջ Ս. Հաղորդութեան չեմ մասնակցիր, պարզապէս անոր համար որ անոր մէջ չփրկուածներ կամ ինկածներ կան, եւ չեմ կրնար և ոչ մէկ մարմնի հետ Ս. Հաղորդութեան մասնակցիլ:

Բայց կէտ կայ մը զոր պէտք է զանազանել: Շատ մը անդամներուն մեղքերը և բուն կեանքը ինծի անձանօթ կրնան մնալ և հետեւաբար եւ վանոնք սխալմամբ քրիստոնէաներ կրնամ նկատուել: Բայց երբ տեսնուի որ եկեղեցիի անդամ մը խմորներու հաւաքովի մը մէջ «խմեցեք ընկերներ, ձեր բոլորին մեղքերը իմ վրայ» թող գրուի ըսելով կ'արտայայտուի, և կամ ասոր նման և հրապարակաւ մեղքեր կը գործէ և տակաւին կը շարունակէ իբրեւ անդամ մասնակցիլ եկեղեցիին՝ խորհելի կէտեր կը ներկայանան մեզի: Եւ ոչ մէկ պարագային տակ ներելի չէ որ այսպիսի մէկը, որուն յայտնի մեղքերը հովիւին և անդամներուն ծանօթ եղած են, շարունակէ անդամակցիլ:

Պէտք է անվերապահօրէն ընդունիլ թէ բոլոր եկեղեցիներուն հոգեւոր կեանքը բաղձալի մակարդակի մը վրայ չի գտնուիր: Ամեն մէկ եկեղեցիի անդամները և հոգեւոր պաշտօնականները մե-

ծապէս պատասխանատու են իրենց եկեղեցիին հոգեւոր կացութեան: Իւրաքանչիւր անգամի մը նաեւ ժողովուրդին իւրաքանչիւր մէկ անհատին կեանքը, պէտք է որ խորհրդածութեան, աղօթքի առարկայ ըլլայ եւ իւրաքանչիւր հոգեւոր անհատ իր օգնութեան բաժինը բերէ եկեղեցիին հոգեւոր մակարդակը բարձրացնելու համար: Ահա այս իմաստով արթնութեան կը կարօտինք:

### ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

#### «ՄԱՌԷՇԱԼԸ»

Պատի գա՛յ, կուգա՛յ, եկա՛ւ: Այս էր որ ամիսներէ ի վեր կը լսուէր թերթերու եւ թւոյցիկներու միջոցով, այս լուրն էր որ շրջան կ'ընէր ամէն տեղ եւ օրուան ամենակարեւոր նորութիւնը կը կազմէր: Բարեբաղդաբար՝ այս անգամ լալիք, ծըխող, թիթիւ կինը չէր որ կը զարդարէր պատերն ու ծանուցատախտակները այլ ծերուկ, ահաաքօղ, ժպտուն ու հրեշտակային գէմքով կին մը որ շատերուն ուշադրութեան եւ հիացման առարկայ կը դառնայ:

Ան Զօրիցերական բոլոր կարեւոր քաղաքներուն մէջ փառաւոր եւ աննախընթաց ընդունելութիւն ունեցաւ այս անգամ. նոյնիսկ այն տեղերուն մէջ ուր ստենօք, իր ուրիշ այցելութիւններու առթիւ, հալածանք կրած, նոյնիսկ բանտարկուած էր:

«Մառէշալը», Տիկ. Պոթ Բլիպօրն, Փրկութեան Բանակի հիմնադիրին ժենէրալ Ուիլիամ Պոթի ազնիւն է, որ իր ամուսնութեան անունին հետ կը պահէ իր ազնիւութեան անունն ալ: Ինք Փրկութեան Բանակէն զատուած է գաղափարներու տարակարծութեան եւ իր անկախ անհատականութեան պատճառով: Իր եղբայրն է որ յաջորդեց հօրը եւ դարձաւ այդ կազմակերպութեան վարիչը: 45 տարիներէ ի վեր Մառէ-

շալը անգաղղրում կը տարածէ Աւետարանի պատգամը Ամերիկայի ու Եւրոպայի մէջ:

Երեք տարուան բացակայութենէ մը վերջ կրկին ժընէվ այցելելը խանգաղացոյցերու առարկայ դարձաւ: Երկու շաբաթի չափ խօսեցաւ ան հազարներու հասնող բազմութեան: Իր ժողովները տեղի կ'ունենային Րէֆորմասիօնի Սըրահին մէջ, հոն ուր Ազգաժողովը կը կատարէ իր հաւաքումները ամէն Սեպտեմբերին:

Իրեն կ'ընկերակցէր իր քարոզիչ տղան եւ իր զրապրուհին, որոնց առաջինը ջութակով եւ երկրորդը իր դաշնակով կ'աւելցնէին հմայքը ժողովներուն: Հոգինները վերացնող երաժշտութեամբ մը գինովցած ժողովուրդը կ'սպասէր Մառէշալին երեւնալուն: Ու կուգար ան յանկարծ բեմին վրայ, գլուխը ծածկուած թափանցիկ քօղով. իր սեւ զգեստներուն վրայէն կուգէին մինչեւ ոտքերը երկարող ճերմակ ժապաւէնը եւ իր ուղիղ կեցուածքը մոռցնել կուտային անոր եօթանասնամեայ ծերութիւնը: Ներկաներու վրայ յառաջ բերած խանդավառութենէն՝ անընդհատ եւ երկար ծափահարութիւններ տեղի կ'ունենային գինքը ուղջունելու համար:

Յետոյ ամբողջ բազմութիւնը Մառէշալի առաջնորդութեամբ կ'սկսէր երգել անոր հեղինակած երգերէն մէկը ա՛յնքան եռանդով որ կարծես երկինքը երկրի վրայ փոխադրուած ըլլար:

Աստուածաշունչէն ընտրած բնարանի մը վրայ ան կը խօսէր անոսայթաք բառերով, իր երկար տարիներու փորձառութենէն եւ բազմաթիւ ու այլազան հոգիներու հետ իր յարաբերութիւններէն կենդանի օրինակներ մէջբերելով շարունակ:

Սովորական քարոզիչ մը չէր բեմին վրայինը: Կին մըն էր ան, մայր մը մանուանդ, որ տառը գաւառիկներ մեծցու-

յաճ է և կրնայ տեսակ մը արժանատի հպարտութեամբ ըսել թէ անոնց բոլորն ալ մէկ կամ միւս կերպով Աստուծոյ թաղաւորութեան կը ծառայեն ներկայիս:

Մարդիկ հիացած անոր կ'ունկնդրէին առանց խօսք մը փախցնելու: Ան կրնար ժամերով խօսիլ առանց յոգնելու և առանց յոգնեցնելու իր ունկնդիրները: Աստուծոյ սկով կամեմտած իր խօսքերը անկեղծ ու ծաղաւտիւծ հոգիներու մեծ վայելքը կը դառնային:

Վերջին կիրակի առտուն Վիքտորիա Հօլի տնի նշանաւոր սրահին մէջ կը խօսէր, նոյն բեմին վրայէն ուր ատեն մը ամէն կիրակի ողբացեալ Ֆրանք Թովմա կը կենար Աստուծային պատգամը որոտալու:

Ու այդ օր առաւօտեան քարոզէն ու տեսակցութիւններէն վերջ, տակաւին երկու ժողով ևս տնդի ունեցան Ազգերու Դաշնակցութեան սրահին մէջ:

Ժողովուրդը անձանձրոյթ կը վաւէր անոր ետեւէն: Նոյնիսկ հեռաւոր վայրերէ մասնաւոր կառավարմբով կը խուժէին զինք մօտիկ ընելու և շատեր ետ կ'երթային տեղի չգոյութեան պատճառով: Հրապարակային ժողովներէ վերջ՝ փափաքողներ ուրիշ սրահ մը կ'առաջնորդուէին, Մասէշալին հետ աւելի մտերմական տեսակցութիւն ունենալու համար և հոն էր որ յաճախ տեղի ունեցած են դարձերն ու խոստովանութիւնները: Դուբը, բակին մէջ ծառուող իր նկարները, տետրակներն ու զերքերը ձեռքէ ձեռք կը խլուէին:

Շատեր նամակով կը զիմեն իրեն, իրենց հոգին մերկացնելու կամ զիրենք տանջող հարցի մը մասին լուսարանութիւն խնդրելու և ան շուտով ու խզճամիտ կերպով կը պատասխանէ բոլոր նամակներուն:

Ձինքը փորձելու կամ ծաղրելու նըպատակով իր ժողովին գացողներ ալ ե-

ղած են, որոնք սակայն ազդուած են իր խօսքերէն ու նոր կեանքի մը առաջնորդուած: Տարիներ առաջ, անգամ մը Նէօ Շաթէլի մէջ ոստիկաններ եկած են զինք բանտ տանելու համար ու երբ գտած են որ խուժմը մարդեցով չըջապատուած կը քարոզէ անոնց, իրենք ալ հմայուած անկէ՝ ապշութեամբ մօտիկ ըրած են մինչև ժողովին լմնալը ու յարգանքով մը մօտենալով իրեն խոստովանած են թէ հակառակ իրենց կամքին ստիպուած են զինք բանտ առաջնորդել տրուած հրամանի մը համաձայն:

Իր անցած տեղերուն մէջ շատ մը յուսահատ լացեր իրական երջանկութեան փոխուած են, շատ մը խորտակուած հոգիներ վերանորոգուած, քայքայուած տուներ ու փճացած ընտանիքներ վերաշինուած են:

Ահա՛ թէ ինչպէս Աստուծոյ հոգին հրաշքներ կը գործէ, երբ Ան կը հանդիշերմեռանդ ու նուիրուած անձի մը վրայ, հոգ չէ թէ այդ մարդ ըլլայ կամ կին:

Ժընևի

ՎԱՐՍԵՆԻԻ ՊԵԿԵԱՆ

#### ԹՈՅՆԵՐ ԵՒ ԹՈՒՆԱՒՈՐՈՒՄՆԵՐ

Մեր ժողովուրդը թոյներու տեսակներուն և թունաւորութիւն գանազան կերպերուն մասին շատ սահմանափակ և թերի ծանօթութիւն մ'ունի: Ընդհանրապէս մեզի ծանօթ թոյներն են զաւրիկ (Արսենի, սըջան օթը), սիւպլիմէ, մօրֆին և ծրորին (Արիֆնիկ) և նմանները: Բայց այսօր իբր իրականութիւն զիտենք որ տեականօրէն հազարաւոր տեսակ թոյներ կ'արտադրուին բուսական և կենդանական աշխարհներու մէջ, որոնք բնութեան տարալուծական զօրձարաններն են: Թոյներու թիւը անհաւատալի կերպով կ'ստուարանայ, երբ անոր վրայ բարդենք հազարաւոր մանրէներու իւրաքանչիւրին կողմէ տրտաղութեամբ թոյներու հազարումէկ տեսակ-

ները: Պէտք է յիշել սա անուրանալի իրողութիւնը՝ թէ մեր մարմիններուն մէջ մեր արտադրած թոյները է՛ն սպառնալից վտանգը կը կազմեն մարդկային կեանքին դէմ և ոչ թէ արտաքին ժահրերը: Յիրաւի շատ զարմանալի երեւոյթ մ'է տեսնել թէ մարդը կը շարունակէ իր հոյութիւնը պահել այնչափ մեծ թիւով թոյներու մէջ, որոնք կը գտնուին օդին և ջուրին մէջ, բոյսերու և կենդանիներու մէջ և մեր մարմիններուն մէջ:

Կենդանական աշխարհի մէջ, մարդէն սկսեալ մինչեւ մանրէները, բոլոր սպորոզները իրենց առած սնունդները կը մարսեն և զանոնք դործածելէ վերջ կարգ մը նիւթեր յառաջ կը բերին: Ասոնք թոյներ են, որ երկվամուսնի, մորթի, թոքի և բնական արտահանումի միջոցաւ մարմինէն կ'արտաքսուին: Ահա իրողութիւն մ'է որ այս արտաքսուած նիւթերը թոյներ են: Թոյն բառը յարաբերական խմատ ունի. նիւթ մը որ մէկուն համար սարսափելի թոյն մ'է, ուրիշի մը համար համեղ ուտեստ մը կրնայ ըլլալ: Աւելի զարմանալին կայ. եթէ նոյն նիւթը նոյն կենդանական մարմին տարբեր տեղերէն այդ մարմինէն ներս մտնէ, տեղ մը սոսկալի թունաւորում յառաջ կը բերէ իսկ ուրիշ տեղ մը համով սնունդի կը վերածուի:

Կենդանական և բուսական աշխարհներու այս մասին իրարու հետ ունեցած փոխ յարաբերութիւնները՝ արարչագործութեան է՛ն զարմանալի էջերէն մէկը կը կազմեն: Այս թոյները, որոնք կենդանիներու մարմիններէն իբր աղտեղութիւն (քակոր, ծիւտ կամ ապովսո) կ'արտաքսուին, բոյսերու համար անհրաժեշտ սնունդներ են. ասոնք անապատները բուրաստաններու և մերկ լեռները ծառատաններու կը փոխեն: Մեր թոքերէն արտաշնչուած թունաւոր կազը, ածխային թթուն, բոյսերու հա-

մար կենսատու նիւթ մ'է. իսկ բոյսերու տերեւներէն արտածորոզ թթուածինը մեր շնչառութեան համար անհրաժեշտ կազն է, առանց որու վայրկեան մ'իսկ տպրիլ կարելի չէ: Հասարակ ազը, որ մեր գոյութեան համար անհրաժեշտ է, բոյսերու համար մահազգեցիկ թոյն մ'է: Ահա այս կերպով, այս երկու աշխարհները զիրար կը լըքայնեն և բնութեան մէջ ներդաշնակ խնայողութիւնը կ'ապահովեն:

Բոլոր թոյները, մետաղային և կազային, բուսական և մանրէական, մահացու են մեզի համար: Կարգ մը թոյներ կենդանական գործարանները կը սպաննեն զանոնք այրելով և քանդելով ուրիշ կարգ մը թոյներ կը թմրեցնեն մեր կենսական գործարանները, սիրտը, թոքը և այլն. հետեւաբար զանոնք անգործութեան մատնելով կ'սպաննեն: Ուրիշներ կը խանգարեն մարմին թրթուածին տանող միջոցները, և խեղդելով մեզ կ'սպաննեն: Վերջապէս ուրիշ կարգ մը թոյներ այլ կան, որոնք մեր մտանները և ջիւղերը այնչափ կը զըրգունեն որ տեսական գալարումի և պրիումի (աբսար) մէջ կը պահեն մարմինը, և մահ կը պատճառեն՝ արիւնի շրջիլը և շնչառութիւնը անկարելի դարձնելով:

Ինչպէս որ վերը յիշուեցաւ տարբեր նիւթեր տարբեր ազդեցութիւններ կ'ունենան՝ մեր մարմին տարբեր տեղերէն ներս մտնելով: Օրինակի համար, կաթը, միտն ու հաւկիթը երբ մեր ստամոքսը մտնեն կը մարսուին, այսինքն անոնք քիմիական փոփոխութեան կ'ենթարկուին և մեզի համար սննդաբար, կենսատու և օգտակար նիւթերու կը վերածուին: Իայց եթէ քու նախաճաշը կազմող կաթէն և հաւկիթէն մի քանի կրամ ուղղակի մորթիդ տակը ներարկես ասեղով մը հոն թունաւորումի նշանները կը ցուցնեն անոնք, որ ստամոքսիդ մէջ կենսատու նիւթեր էին: Մորթիդ

կ'ակախու ռուսի, կարմիր, ցաւիւ և ջերմ յառաջ կուգայ. քանզի այդ նիւթերը մարտահերով չփոխուեցան. նոյնիսկ եթէ անոնցմէ քիչ մ'աւելի ներարկուի կրնան քեզ թունաւորելով մեռցնել:

Վերջերս հասկեցուած է որ օձի և ուրիշ թունաւոր կենդանիներու թոյները ուրիշ բան չեն՝ այլ միայն բնառապիտակային (պալիւստ, հաւկիթի ճերմակին պէս) նիւթ մը, որ երբ կենդանիներու ստամոքսին մէջ գրուի փոխանակ զայն թունաւորելու կը սնուցանէ: Օձի թոյնը արիւնի մէջ թանձրացում յառաջ կը բերէ. աւելի լաւ հասկեցնելու համար լսենք թէ ան երակներուն մէջ արիւնը կը սառեցնէ ինչպէս որ մածունի մակարդը կ'ընէ կաթը, և այս կերպով կը մահացնէ մարդը: Այս կը նշանակէ թէ երբ մէկը օձի խայթում քով յառաջ եկած վէրքը ծծէ, երբէք վտանգի մը չի մատնուիր, և այս դարմանելու լաւ միջոց մ'է:

Մանրէները իսկապէս շատ վնասակար գոյութիւններ չեն, եթէ թոյն չունենան: Անոնք մեզ կը մահացնեն իրենց մարմններէն դուրս հոսած թոյններուն միջոցաւ: Երբ մարդկային կեանքը քննութեան ենթակինք պիտի տեսնենք թէ՛ զանց առնելով պատերազմը արկածը և ոճիրը՝ մանրէները կամ աւելի ճիշդը անոնց թոյններն են որ մարդկային կեանքին վերջ տալու մէջ վերջին խօսքը կը խօսին: Կենդանիներու և բոյսերու համար ալ այս իրականութիւն մ'է:

Եթէ քննենք կաթուածը, չաքարախաւը և ուրիշ առանց մանրէի հիւանդութիւնները պիտի գտնենք թէ անոնց բուն պատճառը դարձեալ մանրէները և անոնց թոյններն են: Ծամրուն մէջ գացող մարդ մը յանկարծ կ'իյնայ և կը մեռնի. ի՞նչ է պատճառը. ուղեղի մէջ երակ մը պայթած է և սիրտը կառավարող կեզրոնը արիւնով լեցուած է և հե-

տեալաբար յանկարծական մահ յառաջ եկած է: Եթէ ուղեղնք մահուան բուն պատճառը գտնել, պիտի տեսնենք որ այդ մարդը 20-30, թերեւս 50 տարիներէ ի վեր թունաւորումի ենթակայ եղած է, և այս պատճառաւ անոր ջիւղերը կարծրացած և կաթուածահար եղած է և հետեալաբար մեռած է, այնպէս որ այդ մարդը իրականին մէջ թունաւորուելով մեռած մէկն է:

(Տօքթ.) Ա. ԺէՊէճեԱՆ

(Շարունակելի)

### ԳՐԴՂԱՌԻ... ԳՐԴՂԱՌԻ...

Գիտենք որ, ջրհեղեղէն առաջ երբ մարդիկ մոռցան իրենց Արարիչը և հեռացան Անոր ճամբաներէն, Աստուած գղջալով մարդը ստեղծելուն, ահա որ թօնուտով մը պատմեց զանոնք: Անցիր էին շատ մը տարիներ և նոյն հետազոտողները քիչ մը աւելի զգաստ, գէշ ու ազէկ կ'ապրէին... տւելի չիտակը ըսե՛մ, Աստուած Պապիկը այլևս շատ բարակին չէր նայեր, յիշելով այն սոսկալի հեղեղին պատճառած քոտմնելի աւերները: Ծի՛շտ նման այն ուսուցչիներուն որոնք յաճախ գէմքերին կը դարձնեն չտեսնելու համար իր աշակերտին գործած մանկական մի չարագործութիւնը: Այսպէս ուրեմն, բարի Աստուած Պապիկն ու մարդիկ օր մըն է կ'անցընէին, առանց լուրջ անհամաձայնութեան:

Բայց եկուր տես որ, այս անգամ ալ երկինքի բնակիչներուն մէջ սկսած էր բուն խոռվութիւն մը: Նոյէն վերջ թոջուններն ալ բազմացած և լեռներու և ծմակներու, սարերու և ձորերու մէջ բնակութիւն հաստատած ըլլալով հանգիւրձ, այնքան ընդարձակ աշխարհքը նեղ կուգար իրենց, նե՛ղ կուգար անպարագիծ հորիզոնը, նե՛ղ կուգային ամպածրար զաղաթները, նե՛ղ էր աշխարհն

ամբողջ, ամէն ինչ, ամէն ինչ: Յաճախ փետրաթափուած և անողորմաբար վիրաւորուած անծեղներ, պապկաներ, բազէներ և ուրուրներ կ'իյնային երկինքէն վար, կ'ստամեռ կամ անկէնդան, զժքախտ զոհեր օգերու մէջ մըղւած անողոք կոխներու:

Յաշխթի(նոյի տղոյմէն մին) շունն ու կատուն որ շատոնց գժտուած էին և իրարու չէին խօսեր, օր մը իրարու հանդիպեցան, երկուքն ալ մէյ մէկ երկինքի իշխաններու գիւղերէն բռնած բերաններուն մէջ:—

—Այդ ի՞նչ է, մլաւեց կատուն, մէջքին ողնասիւնով թիզ մը բարձր զմբէթ մը կամ կամար մը կազմելով:

—Ի՛նչ պիտի ըլլայ, թութակ մըն ալ այսօր գտայ սա մօտակայ դաշտը, ունաց շունը, պոչին ոլորտով աւելի սեղմ օղակ մը շինելով:

—Ինծի ալ աղւոր ուրուր մը շաժին ինկաւ, սա դրացիին առիքէն երկնցայ և խիցի... տաք է տակաւին անոր մարմինը, թեքեա ալ ողջ էր, բայց ճանկերս գիտեն իրենց պաշտօնը կատարել, չազգազից կատուն:

—Ուսկի՞ց կ'իյնան տառնք այս օրեր, աւելցուց չազակրատ փսիկը:

—Է՛հ, մեծ է Աստուծոյ ողորմութիւնը, ըսաւ շունը, բանդէտի հպարտութեամբ, միշտ վիրաւոր են ծանրապէտ, կ'երեւի կը կռուարին վերը:

—Ո՛հ, մենք չկոռւինք ուրեմն, հա՞ջուն ազբար, մրմուսց կատուն, յիշելով շան թաթերուն այն դաժան հարուածները, որոնց հիթակայ եղած էր երկու շաբաթ առաջ և որուն համար արդէն գժտուած...:

Եւ ահա հսկայ թափօր մը կ'անցնէր երկինքէն. թեաւորներու թագաւորը քննութեան ելած էր օդին մէջ, վերջ տալու համար ցարդ թափուած անիմաստ արիւնիւն և մղուած անմիտ կռիւներուն: Արծիւն էր ան, հարիւրհազ

մը անգղերու և բազէներու շքախումբով մը աչքէ կ'անցընէր իր անսահման թագաւորութեան բոլոր անկիւնները և հրահանգ կուտար որ թ օր վերջ Սէնաարի մեծ դաշտը հաւաքուին. թըռչնոց իւրաքանչիւր ընտանիքէն մէյ մէկ զոյգ ներկայացուցիչներ, պաշտօնական հանգամանքով և լիազօրի իրաւունքներով, շնորհուած իրենց ցեղին կողմէ: Հո՛ն, այդ ժողովին նկատի պիտի առնուէր թռչնոց միջև ծագած ծանօթ անհամաձայնութեան հարցը և խաղաղութեան մնայուն ատեան մը պիտի ընտրուէր, ազգի ազգի թռչնոց պատգամաւորներէն բազկացած, ապահովելու համար երկինքի վրդովեալ խաղաղութիւնը:

Ժողովի կայացման օրն էր: Ամէն տեսակ թռչուններ, զոյգ զոյգ կուգային, սկսած սարեակէն ու ծիծառէն մինչև յօշոտողները... կուգային ու կուգային, բազմաբնու Արիսպապոսը, բայց ազնաւենց տունը ուշացած էր, թէև ուրիշներ ալ յամեցած, բայց հասած էին...: Իսկ ազնաւները անդին, մեծ իրարանցումի մէջ էին, ափափայի մը կուշտին վրայ. հազարներով կը թեւաբախէին, կը կրկնային, կը մնջէին, իրարանցում, չփոթութիւն, ժխոր... մի՛ն սիրամարգի փետուր մը, ուրիշ մը թութակին լանջքէն կանանջ փունջ մը, մէկը խատուաիկին պոչէն ծիրանի մը, մէկն ալ կարապին կուրծքէն սպիտակ մը ճարած, կը գեղապճնէին ժողով երթալիք պատգամաւորներին. պէտք էր գեղեցիկ երենալ, կատակ չէր այս...: Երբ ան սիրուն թռչուններ պիտի ըլլային հոն: Անոնք սկսան այլեայլ կըպչուն նիւթերով ամրացնել այդ փոխառեալ փետուրները քիչ մը կարմիր դնել շրթունքին և սպիտակ այտերուն և ահա զոյգ մը ազնաւ ելած էր մէջտեղ ո՛ր... հարիւր վկայ չէին կրնար վաճառահեցնել ձեզի որ անոնք ազնաւ է-

ին...։ Ու անոնք գացին սիգապանծ մուտք մը գործելով բազմադեղան Ս-րիսպազոտին մէջ, իսկորին շիւ ե կողմ-նակի նայուածքներուն մէջ...։

— Ժողովը բացուած է, կ'երեւի բա-ցականները չպիտի վան, գոռաց նախա-գահը, ամէնէն տարեցը արծիւներուն։

— Ազաւազգիք ալ չեկան տրարաց անծեղը...։

— Գըզա՛ւու, գըզա՛ւու, մնչեցին մեր շնորհունակները։ և բոլոր թռչնոց ու-շաղրութիւնը ուղղուեցաւ այս այլան-գակորէն փետրաղարդուած արարածնե-րուն և անոնց հանած ազեղ, ողորմելի և զաղբելի ձայնին վրայ։ Զարմացումը ընդհանուր էր. փոփոք մը, ... ո՞վքեր էին այս չնաշխարհիկները, հազա-րերփն, կեղծ փետրներով պնտուած, միմոսական ձևերով, հապիտի կերպերով ու տարազով... կասկածներ ծնիլ սկսան ... օրոնք բերնէ բերան հասան մինչև մօծն նախագահին ախանջը...։

— Շարքերէն դու՛րս... մոնչեց նա-խաշահը, լրտեսներ մտած են մէջեր-նիս... շարքերէն դու՛րս... մա՛հ դա-ւաճաններուն...։

— Գըզա՛ւու... գըզա՛ւու... կանչե-ցին ազաւանները, բայց լսողը ո՛վ. հա-րիւրաւոր կեռ կտոցներ և հազարաւոր սուր մագիլներ փետրաթափ և արիւ-նաթաթախ ըրած էին խեղճ սեռակները, կորսնցնելով իրենց իրական փետուր-ներն ալ, անողոք յարձակումին մէջ և գըզա՛ւու... գըզա՛ւու... կ'աղերսէին անոնք ամէն անգամ որ նոր հարուած մը կը ստանային... փա՛թ գլխուն... Գըզա՛ւու, փա՛թ ծոծրակին... գըզա՛ւու... փա՛թ ողնասիւնին... գըզա՛ւու... գըզա՛ւու...։

— Հո՛ս, դաւաճանները հո՛ս... որո-տաց նախագահը. և ահա երկու մագիլ-ներ մխուած անոնց մարմնոյն մէջ, ճնճղուկի մը նման խուեցան գետնէն և տարուեցան ծեր արծիւին ոտքերուն

տակ։

— Օգնութիւն, տէր արքայ... գըզ... ազաւա...։

— Ծո՛, մեր ազաւաններն են եղեր... Վա՛յ տխմարներ... ծո՛ այս ի՞նչ կեր-պտրտեքի էիք մտած յիմարներ, ա-պուշներ...։

— Գըզա... մնչեց մին կիսահա-զագ։

— Սատկի՛ք... անմիտ չպարուած-ներ, ներկուածներ, պաճուճապատանք-ներու պէս պնտուածներ... ծեփուած գերեզմաններ, քոզարկուած սեռութիւն-ներ և մրտաներ... սատկի՛ք, ձեր ին-չի՞ն էր վայել այդպէս փետրաղարդուիլ կեղծ ու խորդախ միջոցներով... Ժո-ղովէն դու՛րս, ասոնց սատկած, նեխած մարմինները...։

Յարեթի շուեն ու կատուն կրկին մի-ացած էին տանիքին դռան շուքը, մէյ-մէկ փետրաթափուած և յօշոտուած ազաւաի դիակներ խածած...։

— Ասոնք ահռելի կերպով բզբտուած են, կ'երեւի շա՛տ քաջ էին ըսաւ կա-տուն ահռաներուն մէջէն։

— Կամ շատ ապուշ արարածներ... աւելցուց շունը։

Հալիպ

ՌՇՏՈՒՆԻ

## ԱՅԼԵԻԱՅԼ

### ԳԵՂԵՑԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ

Գեղեցիկ եկեղեցին այն է որ բաւա-կանաչափ հաւատք մ'ունի շինելու իր կեանքը հետեւեալ առաջադրութիւննե-րու վրայ. — յարանուանութիւններու միութիւն, իր հաւատամքը մարդու ձեռքով շինուած դաւանանքներէն և տոկմաներէն աւելի Յիսուոյի կեանքին վրայ հիմնել, և անձնագոհ սիրոյ հոգիով ապրիլ։

Եկեղեցին իր Հիմնադիրին, Յիսուս Քրիստոսին, ճշմարիտ հոգիովը զգես-տաւորուած պիտի ըլլայ, երբ ան ան-

վելզծութեան այս պարզ երևոյթով ինք-  
զինքը ներկայացնէ աշխարհին: Ահա  
ստոնք իբր իր կարգախօսը ունենալով  
հիկեղեցին կրնայ իր զրօշը կանգնել այն  
բոլոր վայրերը, ուր կեանքի բազմամ-  
րոխ ճամբաները գիրար կը խաչաձեւեն:  
Թերեւս բոլոր մարդիկ իր շուրջը չպիտի  
հաւաքուին և իր դռներուն առջև չպիտի  
խոնոտին, բայց երկար քայլ մ'առած  
պիտի ըլլայ սիրոյ Աւետարանը քաղցե-  
լու այս վշտահար և արտասուածքով աշ-  
խարհին:

Ֆ. Ք. ՍԹԷՄ

### ԱՆԳԻՏԱԿ ԲԱՐՈՒԹԻՒՆ

Ժամանակին Հօլանտայի քանդակա-  
գործ մը Իտալիա գնաց՝ այն երկրին  
նշանաւոր հին արձանները օրինակելու,  
և շատ աշխատանք թափելով՝ շատ մը  
մարմարիոնէ արձաններ քանդակելով՝  
զանոնք չոր խոտերու փաթթելով սըն-  
տուկներու մէջ ղետեղեց և հայրենիք  
վերադարձաւ: Անտուկները պարպեցին,  
մարմարիոնէ արձանները թանգարանի  
մը մէջ տեղաւորեցին, և չոր խոտերը  
որ անոնց փաթթած էին, փողոցի  
պարտէզին մէջ թափեցին: Սակայն  
ինչ տեսնեն այն խոտերուն մէջ, Իտա-  
լիայի ամենագեղեցիկ և անուշահոտ  
ծաղիկներու սերմերը խառնուած էին,  
հողին մէջ ինկան. անձրիւր և արիւր  
զանոնք կենդանացուցին, փողոցը և  
պարտէզը՝ իտալական ամենագեղեցիկ  
և անուշահոտ ծաղիկներով զարդարուե-  
ցան: — Նշանաւոր Հօլանտայի քան-  
դակագործը իւր հայրենիքին նուիրած  
այս գեղեցիկ նուէրներէն բնաւ լուրջ ու-  
նէր: Անգիտակցաբար այս մեծ ծառա-  
յութիւնը մատուցած էր: Ամէն մարդ  
ազգին, մարդկութեան՝ շատ անգամ  
անգիտակցաբար բարիք կամ չարիք  
կրնէ: Արդեօք դու բրածդ ո՞րն է:

### ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

#### ՄԱՄԼԹԷՅՆ

Թէ՛ Թրանսայի եւ Յունաստանի եւ  
թէ՛ Սուրիոյ հայութեան մէջ հիւժախ-  
տը սպառնալից հանգամանք մը ստա-  
ցած է: Մնունդի անբաւարարութիւ-  
նը, յարմար զգեստներու և բնակարան-  
ներու պակասութեան պատճառաւ մար-  
մինը կլիմայի փոփոխութիւններուն  
դէմ պաշտպանելու դիւրութիւններէն  
զրկուելով՝ աւերիչ ազդեցութիւն մ'ու-  
նեցած են հայու Ֆիզիկական ամուր  
կազմին վրայ: Այս պարագաներուն  
տակ Մամլթէյնի մէջ հայ թոքախտա-  
ւորներու հիւանդանոցի մը գոյութիւնը  
նախախնամական բարիք մըն է հայու-  
թեան համար, և արժանի ամէն կերպ  
աջակցութեան: Մեծապէս շնորհաւո-  
րելի են հիւանդանոցի խնամակալու-  
թեան անդամները իրենց մատուցած  
ճառայութիւնց համար: Խնամակալ  
անդամներէն Վեր. Ն. Հատիտեան երկ-  
րորդ անգամ ըլլալով քաղաքս եկած է  
յաջադնելու համար 100 օսմ. ոսկիի  
հանգանակութիւնը Հալէպի հայութե-  
նէն. և մինչեւ հիմա կարելի եղած է 200  
սուր. ոսկի հանգանակել: Պէտք է ա-  
ռատաձեւնօրէն մասնակցիլ այս հան-  
գանակութեան. —

1. Նախ թոքախտի վարակումը և  
տարածումը արգիլելու համար, թոքախ-  
տաւորները կղկիացնելով հիւանդանո-  
ցին մէջ:

2. Երկրորդ օգնել դարմանումին  
այն հիւանդներուն, քանի ուշ չէ, ո-  
րոնց բուժումը յուսալի է:

3. Երրորդ միջոցառումը ջանալ այն  
թշուառ հիւանդները, որոնց դարմա-  
նումը անկարելի է:

Մեր ստացած տեղեկագրին համե-  
մատ այս տարուան միջոցին խնամուած  
հիւանդներուն թիւն է 108, 1-60 տա-  
րեկան, որոնց 78ը այս տարի ընդուն-

ւած է, և որոնց 14ը առողջացած, 44ը մեռած, 8ը թողած և 42ը այժմ հիւանդանոցի մէջ կը գտնուին: 1927 Յուլ. 1էն մինչև 1928 Յուլ. 1 ընդհանուր մուտք եղած է 7570.44 Սուր. ոսկի և ընդհանուր ծախքը՝ 7560.44 Սուր. ոսկի: Յուլիս, Օգոս., Սեպտ. և Հոկ. ամիսներու միջոցին հիւանդանոցը ունեցած է 500 տուարի մօտ պարտք մը:

#### ԱՆԿԵԼԱՆՈՑ ԾԵՐԱՆՈՑ ՀԱԼԷՊԻ

Այս հաստատութիւնը Մարաշ հաստատուած և 1923ին Հալէպ փոխադրուած է: Ներկայիս ունի 31 անկարներ, որոնցմէ միայն մէկը էրիկ մարդ, կը խընամուին հոս: 1 Յունվ. 1927—31 Օգոս. 1928, 20 ամսուայ շրջանի մը մէջ ընդհանուր ծախքը եղած է 32,538 զրշ. (100 զրշ. մէկ ոսկիէն). իսկ ընդհանուր մուտքը եղած է 30,855 զրշ.: Քաջալերութեան և շնորհակալութեան արժանի են հաստատութեան մասնախումբը:

#### ՀՐԱԺԱՐՈՒՄ

Վեր. Ներսէս Սարեան, Դամասկոսի Հայ Աւետ. Եկեղեցիի հովիւը, իր հրաժարականը մատուցած է իր եկեղեցիին եւ Պաղեստինի Նազարին առաքելութեան հրաւերը ընդունած է գործելու համար Եաֆայի հայ Աւետ. համայնքին մէջ:

#### ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ

Ատամնարոյժ Տօքթ. Գրիգոր Սարգիսեանի դուստրը Օր. Էմիլիա Գահիրէ-բնակ Տիար Վ. Իշխանեանի հետ Դեկ. 24ին, և Ուրֆայի Ասորի աւետարանական համայնքէն Տիար Ի. Պէսոս՝ բնիկ Մարաշցի Օր. Էլիզա Մեսրոպեանի հետ Յունվ. 14ին:

#### ԽՕՍԵՑԵԱԼՔ

Տօքթ. Երուանդ Հաննէ Խրլոբեան ընդ Օր. Վիգթորիա Նուրի Գարամանուկեանի Յունվ. 10ին:

Մեր շնորհաւորումները:

#### ՄԱՄՈՒԼ

ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄ ՀԱՅ ԱՌԱՔ. ԵՒ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵԴԵՑԻՆԵՐՈՒ

Պր. Գր. Սարաֆեան Փարոսի 1928, Թիւ 12ի մէջ Հայ Առաք. եկեղեցւոյ վերադարձնումին արդիւնքներուն մասին գրելու ատեն նաեւ կ'ըսէ. «Եկեղեցական վերադարձնումի ուրիշ մէկ արդիւնքը պիտի ըլլայ քանդել Լուսաւորչական և Բողոքական, երկու Հայ եկեղեցիներու միջև կանգնուած պատնէշը: Վերջին 70-80 տարուան ընթացքին Հայ Բողոքականը հեռու կ'ապրի իր մայրենի և հայրենի եկեղեցւոյ ծոցէն, անոր համար աւետարանական սկզբունքներուն հակառակ կը նկատէ անոր միջնադարեան ծէս և արարողութիւններով բեռնաւորուիլը, և այս իսկ պատճառաւ միշտ բողոքած է եւ կը բողոքէ նաեւ այսօր: Երբ եկեղեցին կը բարեկարգուի, Հայ Բողոքականին բողոքը կը վերջանայ, և կ'սկսին գիրար տղջագուրել այս երկու եկեղեցիներու ժողովուրդներ իրրեւ եզրայր եւ իրրեւ իրարու արիւնակիցներ:»

Ընդհանրապէս Պր. Գ. Սարաֆեան անուշ և մեղմ բառեր կը գործածէ իր միծ խորագիրներով յօդուածներուն մէջ: Իսկապէս շատ քաղցր և հեշտալի տեսարան մը կը պարզէ ան իր վերի տողերուն մէջ. մանաւանդ ան աւելի նշանակիլ կը դառնայ այն ատեն երբ «Սուրբ Եկեղեցիէն զուրս» կը պոռայ խրոխտապանծ ձայն մը Սիոնի սարէն: Փոխ յարաբերութեանց համար առաջին անհրաժեշտ պայմանն է փոխադարձ յարգանքի և անկեղծ գնահատումի ոգի մը ունենալ: Յաւալի է որ տակաւին այս կը պահսի հայ մամուլին, որուն ին բարեացակամ վերաբերումին կը հանդիպինք երբ կը կարդանք անոր հրաւերը հայ Բողոքականին վերադառնալուն գէպ «Իր մայրենի և հայրենի եկեղեցւոյ ծոցը», իբր թէ ան մոլորեալ զաւակ մ'ըլլար:

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ**ՅԻՍՈՒՍ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**

Ընկերային և կրօնական խուլարկութեան Հաստատութեան կողմանէ Միացեալ Նահանգաց 23 Գոլէճներու և Համալսարաններու Սինեդր կարգի աշակերտներուն հարցարաններ զրկուած են, որոնց պատասխանած են 674 աշակերտներ, 437 երիտասարդներ և 237 երիտասարդուհիներ: Այս թուղթերը հարցումներ կը պարունակէին ուսանողներուն բարոյական բարեխառմին և ալլախերումին, կրօնքի, Ս. Գրքի, բնաշարչումի և Յիսուսի հանդէպ իրենց դիրքին մասին:

Տրուած պատասխանները երեւան ելած էր որ երիտասարդներէն հարիւրին ութսունը և երիտասարդուհիներէն հարիւրին ինըսունը Յիսուսը կը նկատեն այսօրուայ կեանքին՝ իբր բարոյական չափանիշը: Այս պատասխաններէն ուսանց մէջ այսպէս կարգացուած է:

«... Յիսուսի վարդապետութիւնները բոլոր մեր բարոյական կամ բարոյակրօնական օրէնքին հիմը կը կաշմեն: Ես կ'ընդունիմ Անոր վարդապետութիւններուն ունեցած ազդեցութիւնը, բայց չեմ կրնար տեսնել ունէ կապակցութիւն մը՝ Յիսուսի և ունէ կրօնական հիմնական գաղափարի մը միջև:

«... Մենք կը հաւատանք որ Յիսուս հեղինակ է աւելի գործօն ազդակ մը ըլլալու վրայ է: Մարդիկ աւելի ազատօրէն խորհրդակցութեան նիւթ կ'ընեն զԱյն և իբր անձնաւորութիւն մը Անոր վրայ իրենց հիացումը կը խոստովանին քան ասկէ առաջ կ'ընէին: Անոր հանդէպ իմ դիրքս վերապահ լուծթենէ մը փոխուած է համարձակ պաշտպանութեան:»

«... Ես կ'զգամ թէ Անոր աշխարհալը մեծ փաստ մ'էր յուցնելու թէ իրապէս Աստուած մը և հանդերձեալ կեանք մը կայ:»

«... Յիսուս այսօրուայ կեանքին մէջ այնչափ մեծ ազդակ մը չէ որչափ որ Ան պէտք է ըլլայ: Կրօնական կազմակերպութիւնները զԱյն մութին մէջ ձգած են:»

«... Ես չեմ կարծիր որ Յիսուս իբր ազդակ կարեւոր է այսօրուայ կեանքին մէջ: Իր անուանական հետեւորդները իր վարդապետութիւնը ապրելու ջերմեանդութիւնը չեն յույցներ: Սակայն իր վարդապետութիւններն են որուն մէջ կը կարօտինք այս նիւթապաշտ և անձնասէր դարուն մէջ:»

**ՊԱՆԴՈՒԿԻ ՄԷՋ ՄԱՏՈՒԻ**

Նիւ Եօրքի Պիլթօր Հօթէլին մէջ մատուց մը շինուած է, այնպիսի կարգադրութեան մը որ ամէն կրօնքի եւ յարանուանութենէ մարդիկ առթիւ ունենան հոն խոկումի և աղօթքի խախաղ պահ մը վայելելու: Անոր խորանին վրայ գրուած է «Ինծի եկէք դուք բոլոր աշխատողներդ և ծանր բեռնաւորուածներդ և Ես ձեզի հանգիստ պիտի տամ:»

**ՓԵԹՍՊՈՒՐԿ ԴԱՂԱԲԸ ԵՒ ԿԻՐԱԿԻՆ**

Փեթսպուրկ քաղաքը որ կէս միլիոն բնակիչ ունի տակաւին կը պահէ մաքրակրօններու կիրակիի մասին ունեցած հին սովորութենէն մաս մը: Այս քաղաքին մէջ բացօդեայ թատրոնը և շահադիտական նպատակով եղած ֆութպօլի խաղերը չեն կատարուիր կիրակիները:

**ԵԳԻՊՏՈՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ**

Իսլամ պաշտօնական մեծ դէմք մը Եգիպտոսի մէջ՝ կը յայտնէ թէ Եգիպտոսի ուսեալ երիտասարդութեան ստոր մասը չզիտական է (սկիսթիկ):

## ՓՐՕՖ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ

Որոշուած է այս տարի հրատարակել Փրօֆ. Լ. Լեւոնեանի կրօնական հարցերու մասին հրած թրքերէն տետրակներուն Արաբերէն և Պարսկերէն թարգմանութիւնները:

Փրօֆ. Բ. Ընտրուած է համաշխարհային Կ. Դպրոցի ընկերակցութեան փոխ նախագահներէն մէկը:

## ՀԱՅԵՐ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ

20000 հայեր կան Պուլկարիոյ մէջ ուր Հայ Առաք. համայնքը ունի 12 եկեղեցիներ և չորս դպրոցներ:

## ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ

Ռումանիոյ Օրթոտօքս եկեղեցիին մէջ երկու հոսանքներ կան ներկայիս որոնցմէ մէկը կը փափաքի Սուրբ Գիրքը տարածել ժողովուրդին մէջ, որպէս զի ուրիշ յարանուանութիւնները չտարածեն զայն, իսկ միւսը կը հակառակի Ս. Գրքի տարածումին խորհելով որ տնոր ընթերցումը վտանգաւոր է ժողովուրդին համար:

## ՄԵՐԶ. ԱՐԵՒԵԼԻԻ ՀՐԵԱՆԵՐԸ

Սուրիոյ մէջ 200,000 (40,000 միայն Հալէպի մէջ) և Իրազի մէջ նոյն թիւով (120,000 միայն Պաղատարի մէջ) հրեաներ կան, որոնք ըստ այս երկիրները չըջող Վեր. Պ. Բօհօլտի՝ նպաստաւոր տրամադրութիւններ կը չուցնեն արեւմտեան մշակոյթի և Բրիտանիական գաղափարներու հանդէպ: Հրեայ պատուիրակութիւն մը այսպէս արտայայտուած է. «Մենք առանց հովիւի ոչ խարներու նման ենք:» Իրազի մէջ միայն 1500 նոր կտակարաններ և 11500 նոր կտակարանի մասեր տրուած են հրեաներուն, մէկ տարուան մէջ:

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

## ՔԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պապու ազատ էր. բայց, մաքուր օգին ու ազատ կեանքին վայելքն ունէր. ա՛յլ լարձր տխրատեսիլ պատկեր չէր և զաշտերուն ու ծառերուն մէջտեղ: Հիմայ Պապու իր մեծ մօրը հետ միեւնոյն հիւղակը կը բնակէր: Ի՛ր ազատարարը փնտռած, գտած էր Պապուի մօմիկը, ու բերած էր զայն Պապուին քով որ անոր հոգ տանի: Այն գիւղը՝ ուր Պապու կը բնակէր՝ մասնաւոր գիւղ մըն էր. բոլոր ձերբազատուած ոճրագործները հոն բխուած էին. ասոնք պատուոյ խօսք տուած էին զգաստ կեանք մ'ապրելու. ամէն օր ազատ էին իրենց գործով լքողիւ, բայց ամէն իրիկուն պատրաստ էին ներկայ գտնուելու երբ իրենց անունները կը կարգացուէր: Աւով յայտնի կ'ըլլար թէ ո՞ք գիշերը գուրսը կը գտնուէր ոճրագործութեան նպատակով:

Պապու զպրոց զրկուեցաւ: Ասիկայ կարմիր աղիւսէ շինուած մեծ շէնք մըն էր՝ գիւղէն քիչ մը հեռուն: Հոն ճերմակ սահլպը իր պաշտօնատեղիին մէջն էր երբ Պապու ներս մտաւ: «Է, Պապու,» ըսաւ Հնդկերէն լիւստով՝ ազուն գլխէն մինչև ոտքը գննելով, «զուն բանա կենալու չափ մեծ տարիք չունիս, բայց կը յուսամ թէ քեզ անկէ հոս բերելուս համար չպիտի զղջալ տաս ինձի, միտքդ բեր որ քեզ ազատեցի սա պայմանաւ որ եթէ նորէն օրինազանցութիւն ընես, իսկոյն բանա պիտի գտնուուի քու նախկին գատաւճիւղ կրելու, և այն տատեն ալ քեզի համար ինձի ընելիք մը չի մնար: Ի՞նչ կ'ըսես, այս պայմանաւ հոս մնալ կ'ուզե՞ս:»

«Այո, սահլպ:» ըսաւ աղան և անդով:

«Հաւ, եթէ հոս մնալ կ'ուզես, պէտք է մոռնաս բոլոր այն բաները որ առաջ

կ'ընէիր: Ուրիշին ինչքը պիտի չզոգնաս, սուտ պիտի չխօսիս, ամէն օր գպրոց պիտի գաս, մինչեւ անգամ եթէ մեծ մայրդ ծեծէ քեզ գպրոց գալուդ համար: Ինծմէ հրաման չառած այս գիւղէն գորս պիտի չելլես: Կրնաս խոտտանալ որ այս բոլոր ըսածներու պիտի հնազանդիս:»

Պապուի համար շատ ծանր բաներ էին տառնք, սակայն խոտտացաւ:

«Ուրեմն անկէ ետք ես ալ քեզի կը վատահիմ, Պապու:»

Տղիկը սարսուռ մը զգաց սահմիկին կապոյտ աչքերուն նայուածքին տակ բայց բտաւ, «Այո, սահմիկ»: Ու Պապու անկեղծ էր երբ այս խոտտումը կը ընէր:

Այն օրը Պապու շատ ընկճուած երեսոյթ մը ունէր, ու այս վիճակը քանի մը օր շարունակեց. սակայն կամաց կամաց գպրոցին վարժուեցաւ: Ի սկզբուն իրեն շատ ատելի կը թուէր հինգ տարեկան մանկանց հետ միասին նստելը: Զբօսանքի ժամանակ տղայք զինքը կը ծաղրէին ըսելով թէ պէպէքներուն կարգէն է: Քանի քանի անգամ խիստ մեծ փափաք մը զգաց այդ չար տղոց քիթերը կոտորելու. բայց քորէ բարձր պատերն չիշէ, ու ճերմակ սահմիկ քաղցր նայուածքը միտքն ինկաւ: Իրաւ երբեմն մանր մունր յանցանքներ գործեց, բայց կրցաւ ինքզինքը զսպել ու մեծ յանցանքներ չը գործեց:

Անկողմնակալ ըլլալու համար պէտք է ըսել թէ Պապու երբեմն խիստ հաճելի օրեր եւս կ'ունենար մասնաւորաբար վագանցի օրերը, երբ բոլոր այդ ոճրագործ գիւղացիներուն հրաման կը տրուէր որ իրարու քով գային, իրենց ցեղային պարերով, մենամարտերով եւ ուրիշ հաճելի ժամանցներով գբօսնելու համար:

Երբեմն այս վագանցի օրերէն միայն մեջ կը պատահէր որ երկու ոճրագործ

լուջ կոխէի մը բռնուէին, ու կոխը լուջ հանգամանք կ'առնէր, զերար կը վիրաւորէին, արգիլեալ զէնքեր երեսն կ'ելլէին, և ի վերջոյ կամ ոստիկաններ կը միջամտէին և կամ ճերմակ սահմիկը գալով իր մէկ խօսքովը խաղաղութիւնը կը վերահաստատուէր:

Այս ոճրագործներու գաւթակայանին մէջ շատ մը Քանճարներ կային՝ որոնք հիմայ խաղաղ գործերով իրենց ապրուստը կը ճարէին, կային նաեւ ուրիշ ոճրագործ ցեղեր ալ, որոնք իրենց ցեղային ոճիրներով նշանաւոր էին, ինչպէս կեղծ զրամ շինողներ, մանր մունր բաներու գողութեամբ զբաղողներ, «եղնիկ որսացող»ներ, որոնք եղնիկէն տարբեր բաներ կ'որոնային, հայլն: Քանճարները, մեծամեծ աւագակութիւններով կ'զբաղէին, իրենց համար մանր մունր բաներ գողնալը խիստ զգուշի ու արհամարհելի մեղք մ'էր: Այնպէս որ անգամ մը երբ իրենց ծերուկ կիներէն մին ճանկ մը ցորեն կամ երկու ճանկ բրինձ գողցաւ այնքան ամէջան՝ որ անմիջապէս «սահմիկ» ին գիւմիցին:

«Սահմիկ», գանգատեցան, «Դուն մեր սովորութիւնները գիտես: Դուն գիտես թէ Քանճարին ցեղային արժանապատուութեան որքան մեծ արատ մըն է երբ մեզմէ մին մանր մունր գողութիւններ կ'ընէ: Արդ, եթէ Մամա Կիրան մարդ մը խեղդէր, ու անոր զրամը կամ գոհարները զրաւէր, կամ ասոնց նման պատճառներ ընթացք մը ունենար, ոչ ոք իրեն ըսելիք մը կ'ունենար: Սահմիկ պէտք է որ այս պառաւին զուն խօսք հասկցնիս, և այդ խայտառակութենէն ետ կենայ, եթէ ոչ, մեզմէ մէկը կ'սպաննէ զինքը, և այս ամօթէն կ'ազատէ մեր յեղը:

Պապու շատ կը սիրէր կոխները, կեանքը այդ էր իրեն համար, ուր որ կոխ մը ըլլար, անշուշտ Պապուն հան էր, բայց շատ զգոյշ կ'ըլլար որ ինք

անոր մէջ չգտնուէր, կը սիրեր զիտիւ  
և խիստ մօտէն զիտիւ: Օր մը խիստ  
հետաքրքրուեցաւ տեսնելով որ զոչ մը  
բռներ են, ամբաստանելով թէ հինգ ոսկի  
գողցած է: Դատավարութեան միջոցին  
Պապու մեծ հետաքրքրութեամբ կը զի-  
տէր: Մարդը կը բողբէ ըսելով թէ  
ինք անմեղ է և կը թոյլատրէր թէ ու-  
տիկանը իր լաթերը խուզարկէ: Խու-  
զարկութիւնը մանրամասն տեղի ունե-  
ցաւ, իսկ զրամը չգտնուեցաւ: Բայց  
երիտասարդ սահիպը՝ որ իր 2000 ոճրա-  
գործներուն խորամանկ խաղերուն տեղ-  
եակ էր՝ մօտեցաւ գողին՝ ու ժպտելով  
հարցուց «Միւս գրպանդ նայեցա՞նք»:  
Ուրիշ գրպան չունիմ, սահիպ, գոչեց գո-  
ղը իր հագուստները թոթուելով:

«Սա գրպանդ», ըսաւ սահիպը, անոր  
կոկորդը ցոյց տալով, «ահա, հոս են,  
զուրս տուր տեսնամ, ծերուկ գողս:»

Ասոր վրայ մարդը հագալով գուրս  
թքաւ մէկ-երկու-երեք-չորս-հինգ ոս-  
կիները, որոնք իր կոկորդին մասնաւոր  
մէկ խոռոչին մէջ պահած էր: Այս ցե-  
ղի մարդիկը սովորութիւն ունին նորա-  
ծին մանկանց կոկորդին մէջ գաւազա-  
նով փոքր խոռոչ մը շինել, զոգութեան  
պարագային անկէ օգտուելու համար:

(Շարունակելի)

#### ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Այն բաժանորդները որոնք երկու նոր  
բաժանորդներ կը գտնեն, պիտի ստա-  
նան Վեր. Յ. Էսքիճեանի թարգմանած  
«Իքի Գէրբէ Տօղմուշ Ատէմէր»էն օ-  
րինակ մը:

1929ի «ՆՈՐ ԱՒԵՏԱՔԵՐ» ԿԸ ՆՈՒՐԻՆ

Տիար Կ. Գըվըրեան, Հալէպ՝ Փրօֆ.  
Բ. Ս. Կայծակեանի, Ս. Փափլօ, Քը-  
րագիլ:

Վեր. Է. Փարթրիճ, Հալէպ՝ Տիկին  
Ֆէրիտէ Հատիտեանի Հալէպ:

#### ՓՈԽԱՆ ԸՆԿԱԼԱԳՐԻ

(Ի հաշիւ 1929ի բաժնեգիրն)

Վեր. Ն. Սարեանէ, Տամաս, 101.25  
դրշ., Տիկ. Մ. Ճամպաղեանէ, Ֆիլա-  
տէլֆիա, 1 տոլար, Տիար Ն. Աթթար-  
եանէ, Լօս Անճէլօս, 1 տոլար, Տիկ.  
Տ. Պայրամեանէ, Նիւեօրք, 2 տոլար,  
Տիկ. Ա. Քամֆըրթէ, Մօլտըն, 1 տոլար,  
Տիկ. Հ. Կէօքճեանէ, Աղէքսանդրէթ,  
1.5 սուր. ոսկի, Գեր. Ժ. Վրդ. Միսիր-  
եանէ, Պէյրութ, 1.5 սուր. ոսկի, Տի-  
ար Յ. Հալէպեանէ, Պուէնօս Այրէս, 1  
տոլար, Տեարք Զուքեանք, Օմտուր-  
ման, 50 դրշ. եղպ., Տիար Պ. Մ. Մի-  
սիրեանէ, Պուէնօս Այրէս, 1 տոլար,  
Տիար Վ. Պիլէպիքեանէ, Պսթօն, 72.5  
դրշ., Վեր. Ս. Միլքոնեանէ, Աղէք-  
սանդրիա, 2 տոլար, Տիար Յ. Թօգճեա-  
նէ, Հալէպ, 1.50 սուր. ոսկի, Վեր. Ճ.  
Լայմընէ, Մարաշ, 262.5 դրշ. և Տիար  
Փ. Եէմէնիճեանէ, Սփրինկֆիլտ, 1  
տոլար:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԴՐԱԿԱՆՆԵՐ

Կրօնիկն Հիւնր (2) ՏՐ. Ճ. Է. ՄէրճԼ

Հայ Եկեղեցիները

Մեր Դիրքը

ՅՕԴՈՒԱՅՆԵՐ

«Մառեշաքը

ՎԱՐՍԵՆԻԿ

Թոյներ եւ Թուաւորումներ

ՏՐ. Ա. ՃէՊէճեան

ՌՇՏՈՒՆԻ

Դըղաւու զըղաւու

ԱՅԼԵՒԱՅԼ

ՄԱՄՈՒԼ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

Արտօնատէր Վեր. Կ. Յ. Յարութեան  
Տնօրէն-խմբագիր Տ. Ճ. Խըրթեան  
Տարեկան բաժնեգիրն — Սուրիա, 1.50  
Սուր. ոսկի. արտասահման՝ 1.50 տոլար:

Հասցէ—

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE